

631.1

S-16

30 JUL 2010

ՀՐԱՏՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿՈՀԱԿ»Ի ԹԻՒ 1.

631.1
S-16

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

(ԴԱՄ ՀԱՅ ԱԶԳ. ԵՒ ՕՍՄ. ԵՐԵՎՓ. ԺՈՂՈՎՈՑ)

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԱՆՏԱՌԱՑ ԵՒ ՀԱՆՔԱՑ

ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ «ԿՈՀԱԿ»Ի)

ԳԻՆ 30 ՓԱՐԱ

(ը ծախուի «Կոհակ»ի խմբագրատան մէջ)

Կ. ՊԱՂԻՍ
1909

000. 00. 00

631.1
S-16

ՀՐԱՏԱՐՍԿՈՒԹԻՒՆ «ԿՈՀԱԿ» Ի. ԹԻՒ 1.

630
124-ՏԱ

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ
(ԱՆԴԱՄ ՀԱՅ ԱԶԳ. ԵՒ ՕՍՄ. ԵՐԵՎՓ. ԺՈՂՈՎՈՑ)

10838
10801

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԱՆՏԱՌԱՑ ԵՒ ՀԱՆՔԱՑ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ



Կ. ՊՈԼԻՄ
1909

12 AUG 2013

15728

**ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԱՆՏԱՌԱՑ ԵՒ ՀԱՆՔԱՑ
ՋԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ**

(ձառ. Օսմանեան Երեսփոխան Տօք. Ն. Տաղաւարեանի, խօսուած Օսմ. Խորհրդարանին մէջ, 1909 Մայիս 5/18-ին)

Տեառք Երեսփոխանք,

ՏՄԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐՉՈՒՄԱՆ

№ 17

Օսմ. Կայսրութիւնն այժմ կը նմանի երկար ճանապարհորդութենէ դարձող նաւու մը՝ որ իր գնացից մէջ աճեղ փոթորիկներու շարք մ'ունեցած է, և քանիցս ծովամոյժն ըլլալու վտանգներէ մագապուր գերծած է. ուստի և կրնամք երեւակայել այդ նաւուն վիճակը, կայմերն խորտակուած, առագասաններն պատառուտած, ղեկն աւերած, նաւալարը յուսահատ ու ճանապարհորդող ժողովուրդն ընկճուած, իր բարոյական ուժն կորսնցուցած և սպուշ կրթուած: Ահա ինչ վիճակի մէջ կը գտնուիմք այժմ մեր ՅՁ տարիներու դժբախտ ճամբորդութենէ ետք: Արդ քանի որ հասած եմք ի նաւահանգիստ խողաղութեան ու սկսած եմք չնչել լիաթոքն, և իբր մարդ խորճելու ու գործելու իրաւատութիւնն ունիմք՝ հարկ է սթափիլ, մեր ուժերն հաւաքել, և գլուխնիս ձեռքերնուս մէջ առած խորհիլ թէ ի՞նչ պարտիմք ընել այս խղճալի վիճակը բարւոքելու և Օսմ. երկրին նաւը կրկին բարւոք, գործոն ու պատկառելի վիճակի մէջ գնելու համար: Նախ քննեմք մեր ցաւերն ու պէտքերն, և խոստովանիմք մեր թերութիւններն. այն սր կը ճանչնայ իր պակասը, ի վիճակի կրնայ համարուիլ անոր դարմանը գտնելու: Պէտքերնիս այլազան են ու բազմազան և այնչափ շատ՝ որ շուտարած չգիտեմք ո՞ր կողմէն սկսիլ վերաշինութեան ու վերակազմութեան գործոյն. հարկ է սակայն չլուսահատիլ, պող արիւնով նօթագրել մեր ցաւերն ու դժել զայնս դար-

մաներու մեր գործունէութեան ծրագիրն, և ընդ փոյթ գործի ձեռնարկել, յիշելով միշտ՝ գործի սկսիլը զայն կես ընել կը նշանակեալստը:

Մեր երկրագործութիւնն տարրական ու նահապետական վիճակի մէջ կը գտնուի, հանքերն անտես առնուած են և կամ անոնց շահագործման իրաւունքն օտարաց շնորհուած է, անտասներն անխնամ ու փճացման վիճակի մէջ են, ձեռարուեստն ու ճարտարարուեստն գրեթէ ի սպառ գոյութիւն չունին, և օտարներէն կ'ակնկալեմք մեր նախնական նիւթերու ձեւափոխումն ու ձեւակերպումն՝ հաղորդակցութեան միջոցներն քիչ են, անբաւ և շատ անզամ խիստ տարրական, թղթատարութիւնն բարեփոխութեանց պէտք ունի. Կայսրութեան վարչական ներքին մեքենան փաստ է և արմատական բարեփոխութեանց կը կարօտի. դատական գործունէութիւնն ի հիմանց վերակազմուելու պէտքին մէջ կը գտնուի. մեր դպրոցներն բազմաթիւ են, սակայն մակերեսութային և տեսական կրթութիւն մը կուտան մեր զաւակաց՝ առանց գործնական մտղանաց, որով շրջանաւարտք իրենց հմտութիւնն արդիւնաւորելու համար պէտք ունին կա՛մ երկարամեայ փորձառութեան և կա՛մ Եւրոպիոց մէջ մարդուելու: Մեր նաւատորմն երբեմն Եւրոպայի երրորդն՝ այժմ ամենէն յետիններէն է. բան մ'ունինք միայն լաւ և այն ալ մեր ցածաբային բանակն է, որ իր անձնուիրութեան, ատկունութեան և քաջութեան տեսակէտով ի վաղուց Եւրոպայի հիացման արժանացած է և համարուած է աշխարհի ամէնէն քաջարի բանակն, որոյ կը պարտիմք և մեր այսօրուան վիճակն, մեր ազատագրութիւնն, և իբր մարդ ապրելու իրաւունքն. սակայն այն ալ լստ Նարոլէոնի աստեթեան իր շփոն՝ դրամին՝ նուազութեան հետեւանօք չկրնար պէտք եղածին չտի շարժանք ներշնչել օտարաց և դա է մեր արտաքին քաղաքականութեան փայլը նուազեցնողն: Սակայն դրամը ոչ միայն բանակի ու պատերազմի՝ այլ և մեր վերոյիշեալ բոլոր ցուերու գեղն ու դարմանն է. որոյ վասն և մեր աշխատութեան առաջին նիւթն եղաւ ելեւմտից հաւասարակշռութիւնն հաստատել, այսինքն պիւսժէն պատրաստել, և այդ կարեւոր ու միանգամայն դժուարին գործն յանձնեցինք մեր ամէնէն աւելի անտեսագէտ և դրամավարութեան հմուտ ընկերնե-

րուն: Կ'երեւակայեմ թէ այդ պիւսժէի գովախօսի անդամներն ո՛րչափ դժուարութեանց ու կնճռատութեանց առջև կը գտնուին, զի արդարեւ հրաշագործ ըլլալու է մեր թուած անհուն պէտքերն հողալ մեր ձեռաց տակ գտնուած աղքատիկ եկամուտներով... սպասելով մեր պատուարժան ընկերաց այդ աշխատութեան արդեանց՝ խորհիմք թէ ի՛նչպէս դրամական եկամուտի աղբիւրներ կրնամք ստեղծել: Նոր եկամուտ (հասրլաթ) ըսելուս գիտեմ ձեզմէ շատեր քմծիծաղ մ'ուներցան, կարծելով թէ մինչև հիմա առաջարկուած միջոցներու նման մը պիտի առաջարկեմ, ժողովրդեան վրայ նոր տուրք մը և կամ աւելի ճիշտ խօսելով՝ ժողովուրդը կեղեքելու մի նոր միջոց. ո՛չ, բաւ է որչափ ատեն և որպիսի անխիղճ միջոցներով կողոպտեցինք մեր խեղճ ու հլու հպատակ ժողովուրդն, ո՛չ, այդչափ երկար տարինուրու անգութ արիւնատութենէ վերջ կրկին անոր մասին խօսին իսկ ոճիր մ'է. ուստի ի բաց վանեմք միանգամ ընդ միշտ այդ անարդար եղանակներն և քննեմք թէ որք են երկրի մը հարստութեան աղբիւրներն ու ջանամք այդ աղբիւրներն զարգայնել մեր Օսմ. Հայքնեաց մէջ:

Ըստ Տնտեսագիտական օրինաց՝ երկրի մը հարստութեան աղբիւրներն են իր հողերու բնական արդիւնքներն, այսինքն երկրագործական, անտառային ու հանքային արտադրութիւններն, և կամ այդ բնական արտադրութեանց ձեւափոխական արուեստներն, այսինքն ճարտարարուեստն ու ձեռարուեստն: Կան երկիրներ որք այդ աղբիւրներէն մին-ունին, զոր օրինակ՝ Ռուսիա երկրագործական երկիր մ'է, Նորվեկիա անտառային երկիր մ'է, Անգլիոյ մի մասն ճարտարարուեստական է. կան երկիրներ որք այդ աղբիւրներէն երկուքն ու երեքն և կամ ամէնն ալ միանգամայն ունին՝ որպէս Յըբանա և Պելժիա, որք թէ՛ երկրագործական, անտառային, հանքային, ձեռարուեստական և ճարտարարուեստական են: Մեր Օսմ. Հայրենիքն մինչև ցարդ լո՛կ երկրագործական երկիր մ'եղած է, այսինքն իր հողի առած բուսականութեան և արտադրած կենդանիներու շնորհիւ հոգացած է իր Կայսրութեան ծախքերն ու պահած է Օսմ. Հայրենիքն: Թէպէտ ունիմք անթիւ ու այլազան հանքեր, սակայն անոնցմէ գրեթէ օգտուած չեմք ցարդ, զի զայնա շահագոր-

ծելու համար պահանջուած օրինական ձեւակերպութիւններն ա՛յնչպիսի կը դժուարացնեն մեզ անոնց մերձեցումն որ օտարներ իրենց ազդեցութեամբ երկրի զաւակներէն աւելի պաշտպանուելով հին աշխարհն՝ կ'օգտուէին անոնցմէ . և արդարեւ մեր երկրի հանքերուն ամէնէն աւելի արդիւնաբերներն և ծովիզերց մօտիմներն օտարաց նուիրուած , շնորհուած և կամ հնչին գիներով դանտնք արդիւնաբերելու մենաշնորհներն վաճառուած են . իսկ ներքին գաւառներու վերաբերողներն լքուած կը մնան , հաղորդակցութեան միջոցներու չզոյութեան ու դժուարութեանց և վարելու համար կարեւոր դրամագլուխներու պակասութեան համար : Իմ բնագաւառի Սեբաստիոյ շուրջ բոլորը պղնձի , արծաթխառն կապարի , ամիանիթի , և վառելանիւթերու բազմաթիւ հանքեր կան , որոնցմէ ոչ ոք կ'օգտուի , զի նախ օրէնքը չլիցաւորեր , և թէ ինչպէս բայնք՝ գործելու համար դրամագլուխ և փոխադրելու համար ճամբաներ կը պակսին :— Կան երկիրներ որոց եկամուտի ու հարստութեան գլխաւոր աղբււրներէն մին անտառներն են , մենք այդ տեսակէտով մեծապէս նպաստուորուած եմք Բնութենէն . բայց միայն ծովեզերեաց , ջրեզերեաց և երկաթուղեաց երկայնքը գտնուող անտառներէն կ'օգտուինք , և սակայն ասոնք ալ Սէլիմ Մէլհամէի նախարարութեան օրով՝ անտառաց արդիւնքն աւելի ցուցնելու մտադրութեամբ՝ նախարարութեան կողմանէ տրուած պատուերին համաձայն՝ առանց յարգելու գիտական օրէնքներն այնչափ կտրուած են որ այսօր գրեթէ ամբողջութեամբ փճացած են : Իսկ հաղորդակցութեան միջոցներէ զուրկ անտառներէ միայն իր շուրջ բոլորի ժողովուրդն կ'օգտուի . նա զայն չարաչար կերպով կը կտրէ ու ոչ միայն ջեռնիւղ ու իր խոհանոցին համար կը գործածէ՝ այլ և հաճոյից համար կը վառէ , զի վաճառելով անկէ օգտուելու հնարաւորութիւն չունի . շատ անգամ մի քանի փարա լուսանիւթի խընայողութեան համար փայտի կոճղ մը կը նետէ օճախն՝ գիշերն ի բուն անոր բոցի լուսով լուսաւորուելու համար . . . իսկ անտառներէն հեռի գտնուող երկիրներն կը գոհանան կենդանեաց ալքն արարի (թէգէկ) վերածնելով գործածել իբր վառելանիւթ և այդպէսով կը զրկեն իրենց հողերն՝ զիրենք պարտաւորելիք բնական և հարուստ նիւթէն , և այդ ամէնուն գլխաւոր պատճառն է հաղորդակցութեանց միջոցներու չզոյութիւնն :

Գալով բուն երկրագործական արտադրութեանց՝ անոնցմէ շատ քիչ կրնայ օգտուիլ խեղճ երկրագործ ժողովուրդն և հետեւաբար մեր Հայրենիքն : Առատութեան տարիներու բերքերն դրամ չեն ըներ և հաղորդակցութեանց միջոցներու դժուարութեան և չզոյութեան պատճառաւ տեղւոյն վրայ կը փոխն և կամ հնչին գիներով կը ծախուին . իսկ ապերախ տարիներուն՝ դրացի գաւառներու ամբարանոցներէն չեն կրնար օգտուիլ միւսնոյն պատճառներով . ուստի և յառաջ կուգայ սղութիւն ու սով : Օրինակաւ մը բացատրեմ . իմ հայրենեաց Սեբաստիոյ հողերը բերրի են , ժողովուրդն աշխատասէր է , ու մշակութեան գլխաւոր աւարկաններն են հացահատիկներն (զահրէ) , արդ՝ այս երկրի և մասնաւորապէս Սեբաստիոյ ամնազին մէջ ցորենի բերքի առատ տարիներուն տեղական քիչն՝ որ 180 քաշ է՝ 50-45-40 դրշ . ի կը վաճառուի , զի տեղափոխութիւնը դժուար է և մատուցումը պահանջէն շատ աւելի է . երկրագործն ստիպուած է քաղաք բերել զայն և դրամի վերածել , և այդ պարագային տեղական վաճառականը կրնայ այդ ամենաաժան ցորենը մինչեւ Սամսոն հասցնել , գնոյն կրկնապատիկ ճամբու ծախք մ'ընելով , ու վաճառել անդ և կամ նոյն իսկ զրկել ի Ֆրանսա կամ այլուր . և կամ ամպարնին կ'առնէ զայն , կ'ամբարէ իր շտեմարանաց մէջ՝ դժբախտ տարիներուն զայն 5-6-8 և 10 անգամ աւելի սուղ ծախելու համար ժողովրդին և նոյն իսկ երկրագործին :

Քիչն 40-50 դրշ . ի վաճառող խեղճ երկրագործին ելեւմուտքն եթէ ի հաշիւ առնեմք , պիտի հաստատուեք թէ՛ անոնց դրամագլուխն (աշխարհաց) % 3 ալ չէ արտադրած , ու իրենց օրական աշխատութեան վարձքն 20 փարայի իսկ չգար , և որով անոնք տարին ի բուն չարաչար աշխատելով և միայն թիփոս հաց , մածուն , ու տարին մէկ երկու անգամ հիւսնոյ ոչխարի մը միսն ուտելով , և իրենց արտադրած հացահատերն , պանիրն , կարագն , մեղրն , հաւկիթն ու հասցուցած ոչխարներն խիստ սժան ծախելով՝ հողիւ կրնան իրենց ծանր տուրքերը վճարել . իսկ ապերախ տարիներուն՝ խեղճերուն ծանր տուրքերը վճարել . կը բաւ տրոց , ցորենը կը սղէ և աշխատութեանց արդիւնքն հողիւ կը բաւ տրոց , ցորենը կը սղէ և անա այս տարի Սեբաստիոյ մէջ քիչն 350 դրշ . է՝ և ամէն անոնք որ ղուրպէթի մէջ գաւակ մը չունին նպաստ հասցնելու՝ ստիպուած են

իրենց կենդանիներն և կամ հողի մէկ մասն ծախել, այսինքն դրամագլուխն ուսել և կամ քաղաքներն գալով մուրալ, ինչ որ տեղի կ'ուներնայ այս տարի... և այն որ ուտելիք հաց չունի՝ անշուշտ հողին յանձնելիք սերմնացու ալ չունենար... և ինչ կ'ըլլայ յաջորդ տարին այդ երկրագործին վիճակը, ինչ պիտի ըլլայ զորօրինակ իմ հայրենակից սերաստացի երկրագործներու վիճակը՝ եթէ կառավարութիւնն օգնութեան չհասնի...: Ինչ որ ըսի Սերաստիոյ համար՝ կրնամ և կրկնել այլ շատ մը տեղերու՝ Անատոլուի և ներքին գաւառներու համար, որպէս Վան, Մուշ, Սղերդ, Խիզան, Բդի, Խարբերդ, Կիւրին, Հոնք, Բիլիս, Էն., և այդ ամէն գոթաղբութեանց զլիսաւոր շարժումիւ պատճառն ճանապարհորդութեանց և հաղորդակցութեանց միջոցներու չզոյւթիւնն է: Արդարեւ եթէ մեր ատած օրինակին մէջ հաղորդակցութեան միջոցներ ունենայինք՝ առատ տարիներն պիտի կրնայինք մեր ցորենն այլուր գրկել, և որով տեղական հրապարակին վրայ պիտի կրնայինք քիչէն 100-120-150 դրչ. ի ծախել, որով երկրագործին ձեռքն դրամ կ'անցնէր և աւելի սիրով մեծ տարածութիւններ մշակելու սիրտ կ'առնէր, աւելի լաւ անունը կրնար ընդունիլ, իր կենդանեաց թիւը կը բազմացնէր, և գոթաղբ տարիներու կրնար դիմադրել:

Գալով կենդանային արտադրութեանց՝ կրկին մեր օրինակ առած երկրաց մէջ եզան միւր $1\frac{1}{2}$ դրչ. ի, իսկ ոչխարինն $2-2\frac{1}{2}$ դրչ. ի կը վաճառուին, մինչ մենք հոս՝ ի 4. Պոլիս՝ շատ անգամ այդ անդական ստարկաներն արտասահմանէն կը բերեմք, և առաջինը 5-8՝ իսկ երկրորդն 6-12 դրչ. ի կը գնեմք ըստ տարւոյ եղանակին: Ինչո՞ւ մենք մեր երկրագործներուն այդ կենդանային արտադրութիւններէն չեմք կրնար օգտուիլ. զի հաղորդակցութեանց միջոցներէ զուրկ ենք, ու այդ կենդանիներն իրենց ոտքով ամիսներ քաղցնելով մինչև որ հոս բերեմք՝ ա՛յնչափ ծախք կ'ըլլայ, ու անոնց անդական արժէքն այդ յոգնեցուցիչ տեղափոխութեամբ այնչափ կ'իջնայ՝ որ մեր երկրագործներն անկէ չեն կրնար օգտուիլ, ու կենդանեաց բուծման տեսակետով չեն քաջաւերուիր: Նոյնը կրնանք ըսել կենդանային և բուսային այլ անդական տարրեց մտփն, ուստի աւելորդ է երկարել աստ: Ի մի բան՝ մեր երկիրն այնպիսի աննպաստ պայմաններու մէջ

կը գտնուի որ նոյն իսկ իր բնական արտադրութիւններէն շատ քիչ կ'օգտուիմք, և ստէպ ոչ միայն չեմք կրնար զանոնք արտածել՝ այլ և մեզ պէտք եղած հայն ու միան արտասահմանէն բերել կուտամք... անաւասիկ մեր աղքատութեան և անկէ հետեւող ցաւերուն պատճառներն:

Վերջիչեալ աննպաստ պայմաններու մէջ գտնուող գաւառներու երկրագործներն ստիպուած են կարենալ ապրելու համար՝ իրենց զննամեաց գոնէ երիտասարդ մի անդամն զրկել ի Պոլիս, և կամ մի այլ ծովեզերեաց քաղաք, ուր իբր բեռնակիր և կամ այլ նմանօրինակ ստոր արհեստներով կը ջանան գոցել իրենց ընտանեաց պիւսնէի բացն, հեռի մնալով 5-10 կամ աւելի տարիներ իրենց ընտանեաց բոյնէն, և այսպիսով իրենց երիտասարդութիւնը կ'անցնի յօտարութեան, և ոչ միայն հայրենիքն այդ բեղմնաւորութեան տարիներու արդիւնք գաւակներէն զուր կը մնայ՝ այլ և այդ գոթաղբներն ինտութեան պահանջին հետեւանօք հիւրամեծար տուներու և հիւանդոտ կանանց բազկաց մէջ սփոխոււմ զնաւելով՝ կը վարակուին անուելի հիւանդութիւններով, կը տանին զայնս իրենց հայրենիքը և կուտան իրենց կիռք ու ընտանեաց... և այսպէսով անա այդ հիւանդութիւններն սկսած են կոտորած ընել մեր գաւառներու ամենը բնակչութեան մէջ: Մի կարծէք, Տեսք երեսփոխանք, թէ իրական պատկերը սեւցնելու ճիգեր կ'ընեմ, ոչ, այլ իրողութիւնն իր իրական գոյներով կը ներկայացնեմ ձեր առջև, որպէս զի գուք՝ Օսմ. Ազգի ներկայացուցիչներն՝ դարման տանիք այս ցաւերուն. ըստ Ֆրանսական առածին՝ մեծ ցաւոց մեծ դարմանք կարեւոր են:

Քիչ մ'առաջ ծանր համարեցի երկրագործ ժողովրդեան տուրքերն, եթէ օրինական տուրքերն միայն նկատի առնեմք՝ սխալ մ'է զայնս ծանր անուանելն, սակայն օրինականներու քով հարկ է և ի հաշիւ առնել ապօրէններն. արդարեւ ինչ որ աւելի կ'առնէ աշար մէմուրին, ալիսամ մէմուրին, տուրքահաւաքն, ժանտարման, զիւղերու ազան, դրացի շէյխն ու տերէպէյին, զիւղէն անցնող պաշտօնատարն, հաւաքիչներն, զիւղախումբի միւտիւրն, գաւառի միւթէարըֆն և նահանգի կուսակալն երբ տեղի կ'ըլլեն, կ'առնեն ու կ'առնեն, և շատ անգամ ոչ միայն ունեցածէն այլ և չունեցածէն.

այսինքն ստիպելով խեղճ գիւղացիին՝ որ իրենց աչաց տալէ ոչխարներն կամ եզն ծախէ ու արդիւնքն իրենց ձեռքն լեցնէ . իսկ եթէ աղքատ է ու չունի՝ կը ծեծուի, կը բռնատարկուի, մինչև որ հարկադրուի ծանր սովոտով փոխ առնել և կամ ծախել իր խոհանոցի միակ գործին պարխաճն կամ թէնճիրէն, որոնց մէջ ապուր կ'եփէ, և կամ միակ այծն՝ որոյ կաթով իր մանկիկը կը սնուցանէ, զի պէտք անհրաժեշտ է վճարել այդ անդուլթներուն . — սակայն միւս կողմանէ գիւղի ունեւոր աղան, գաւառացի շէյինն և տէրէպէյին և կառավարական կարեւոր պաշտօնեաներն ոչինչ կը վրձարեն . և ո՛վ կը յանդգնի այդ անձնաւորութիւններէն տուրք պահանջելու, խեղճ գիւղացիներն պարտին միայն կառավարութեան ծախքն հոգալ :

Վերջերս ոմանք՝ նոյն իսկ տեղական թերթերու միջոցաւ՝ առաջարկեցին Օսմ . Հայրենեաց իբր հարստութեան ստեղծիչ միջոց՝ ընկերութեանց հաստատմամբ ձեռարուեստի և ճարտարարուեստի գործարաններ հիմնել, անուշտ ներքի չալտի համարուէր առ այդ խորհիլ ծովեզրներէ և երկաթուղոյ գծերէ հեռի գանուող տեղերու համար, սակայն քննեմք թէ նոյն իսկ հաղորդակցութեան միջոցներով օժտուած տեղերը խոհեմութիւն պիտի կրնար համարիլ . ոչ, գոնէ առ այժմ, արդարև մինք այդ գործարանաց հաստատութեամբ մեր անվարժ գործաւորներով ու սուղ սովոսօք դրամագլուխներով պիտի ստիպուինք եւրոպական վարժ գործաւորներու և աժան սովոսով գրամագլուխներու հետ մրցիլ . ի նկատի չառնելով նոյն իսկ գործաւորաց հարցն, սովոսի ինդիքն բաւ է զմեզ կորստեան մատնելու : Արդարև չեմք կարող մեր փոքր դրամագլուխներով որ մեզ 100 ին 10 սովոս կը բերեն՝ մրցիլ եւրոպական դրամագլուխներու հետ, որք 100 ին 4 ուլ տրամադրելի են . մրցումն զմեզ կրնայ փճացնել, ու օրէնքն և դաշնագրեր չալտի կրնան զմեզ պաշտպանել օտար ապրանսաց դէմ՝ մաքսերու բարդմամբ . ուստի և առ այդ ո և է փորձ սխալ մ'է, գոնէ առ այժմ, և որով մեր հարստութեան միակ աղբւրն կը մնան երկրագործական արտադրութիւններն :

Արդարև մեր Օսմ . Հայրենիքը լոկ երկրագործական երկիր մ'է, գոնէ առ այժմ, մեր երկրի ծախքերն հոգացողն ու մեր կառավար-

ութիւնը պաշտպանողն երկրագործութիւնն է . սակայն ի՞նչ բրած եմք մինչև ցարդ մեր երկրին հարստութեան միակ արտադրիչ այդ արհեստի ծաղկման համար . . . չեմ յանդգնիր ոչ ինչ բնել, զի կարգ մը փորձեր եղած են, սակայն գրեթէ ամէնքն ալ ապարդիւն և աննպաստ եղած են մեր երկիրը պահպանող խեղճ երկրագործ դասակարգին : Այդ միջոցներն երեք դասի կը բաժնուին :

Ա . Ուսանողներ զրկել Եւրոպա՝ յուսուլն երկրագործութեան . — ԺԹ . դարու կէսէն սկսեալ կառավարութիւնն սկսած է պարբերաբար ուսանողաց երամներ զրկել ի Ֆրանսա, և ապա 1883ին՝ գերմանաւորութեան մի շրջանին՝ կարգ մը աշակերտներ Գերմանիա գացած են : Կառավարութեան օրինակին հետեւելով և մասնաւորներ զրկած են իրենց զաւակներն յուսուլն երկրագործութեան՝ ի Ֆրանսա : Կառավարութեան կողմանէ զրկուածներն եղած են ի վերադարձին երկրագործական պաշտօնիա, երկրագործական քննիչներ, որոնցմէ ուէ օգուտ չէ քաղած խեղճ երկրագործ դասակարգն, զի ասոնք նահանգներու կեդրոնն հաստատուելով շատ քիչ անգամ յարաբերութեան կը մտնան երկրագործ դասակարգին հետ, և կան որ հազիւ տարին մի անգամ հարևանցի տեղեկագիր մը և կամ պարզ նամակ մը կը զրկեն երկր . նախարարութեան, որ և շատ անգամ նկատի չառնուիր, չկարգացուիր իսկ : Ըանչցայ երկրագործական քննիչ մը որ ամէնէն ժիրն եղած է, որ նախ ստէպ կը գրէր տեղեկագրեր իր վիճակի երկրագործութեան մասին, որուն գրերն աւելի ձանձրոյթ կը պատճառէին երկր . ժողովոյ անդամոց . . . սակայն ապա յուսահատելով սկսաւ այլոց նման ամսական առնելով բաւականանալ ու քեյժ ընել : Ի՞նչ կը սպասէք այսպիսի պաշտօնէութենէ մը : Իրենց անձնական ծախքով ուսում առնողներն ի վերադարձին տեսնելով երկրագործութեան վիճակն, և հաշիւ ի ձեռին հաստատուելով թէ ամէն կարգի օրինական և ապօրէն տուրքերով ծանրաբեռնեալ է խեղճ երկրագործութիւնն, և ի փոխարէն այդ ամէնուն՝ ուէ կերպով պաշտպանուած չէ, հաղորդակցութեան միջոցներու դժուարութեան պատճառաւ իր արտադրութիւնները չէ կարող արդիւնաւոր կերպով վաճառել, և ի մի բան՝ տրուած պայմաններու մէջ երկրագործութեամբ չկրնար իսկ իր դրամագլուխին 100 ին 4 սովոս ստանալ՝ մինչդեռ

ուէ այլեղանակաւ 100ին 10 տոկոսը միշտ ապահովուած կընայ համարուիլ, և վերջուպէս հաստատելով թէ միլիոնատէր մ'իսկ այս պայմաններուն տակ երկրագործութիւն ընելով կրնայ փճանալ, թողած են բուն երկրագործութիւնն և աշխատած են իրենք ալ երկրագործական պաշտօնեայ դառնալ, այդ մակարոյճներուն թիւն ստուարացընել և կամ փոխել իրենց ճիւղն ու զբաղումն: Երկրագործութիւն ուսանելէ ետք ուրիշ գործերով զբաղողներու մի մասին ցանկը տամ աստ: Կրճիկեան Յովհաննէս՝ Անդրիերէն լեզուի ուսուցիչ է, Նուրի պէյ՝ գոր արտաքին գործոց նախարարութեան քարտուղար ճանչցած էք, մեր նախագահն Ահմէտ Բիգա պէյ՝ որ Բարիլի երկրագործական բարձր. ուսումնարանի շրջանն աւարտելէ ետք՝ դարձին ստիպուեցաւ ինքզինք դաստիարակութեան գործին նուիրել՝ Ազգ. դատի պաշտպանութեան սկսելէ առաջ, նուազստ որ Յրանասյի մէջ նախ գործնական երկրագործութեան վարժարան մ'աւարտելէ ետք մեր նախագահին հետեւած երկր. բարձր. ուսումնարանէն ալ ելած եմ, ու աստ դարձիս՝ փոքր ինչ Երկրագործութեան մէջ աշխատիլ փորձելէ ետք քաջուելով՝ դաստիարակութեան գործոյն նուիրուեցայ և ապա բժիշկ եղայ: Մեր դասակարգին կը վերաբերին և Կիւմիւշեան, Անդրէտանան Նշան և Ամասեան Մօրիս՝ որոնք վաճառական եղած են, և Տուրատ, ձէմալ պէյ, Արիս Օտապաշեան, Ղ. Բոլատեան, Մարկոսեան Սիմօն, Հրանտ Տիւզ և այլք, որոնք զանազան գործերով կը զբաղին: Մինչ 1896ին Եւրոպայի մէջ երկրագործութիւն ուսանող 58 անձերէ 35ն կառավարութեան պաշտօնեայ եղած են, 6ն երկրագործ, և մնացեալները տարբեր գործերով զբաղողներ, ինչ որ բաւ և շատ իսկ է մեր ըսածն հաստատելու:

Ի մի բան՝ Եւրոպայի մէջ Երկրագործութիւն սորվելու համար զրկուած ուսանողներէն Օսմ. Հայրենիքն օգտուած չէ ցարդ, և այս դրութեամբ չէ կարող օգտուիլ:

Բ. Երկր. վարժարաններ եւ սիպար ագարակներ հաստատուեցան. — Երկր. վարժարաններն՝ ինչպէս են Սեւանիկի և Պրուսայի գործ. վարժարաններն և Հալքալըի Երկր. բարձր. վարժարանն: Ասոնցմէ ելլող աշակերտներէն շատ քիչեր բուն երկրագործներ դարձան, և այդ մեզ ծանօթ պատճառներով, և շատեր ջանացին ըլլալ կառա-

վարական պաշտօնեայ երկրագործական և կամ այլ ճիւղերու: Ուստի և այդ վարժարաններէն ալ մեծ օգուտ մը չունեցաւ երկրագործ դասակարգը:

Գալով տիպար ազարակներու՝ շատ քիչ անգամ դոքա կրնան ծառայել իրենց բուն նպատակին, զի այդ ազարակներն հեռի են երկրագործական օճախներէն, և անոնց անօրէնները կզգլացած կ'ազրին առանց երկրագործ դասակարգին հետ բանախօսութիւններով ու դասախօսութիւններով յարաբերութեան մասնելու, որով և այս հաստատութիւններէն ալ չեն օգտուիր մեր խեղճ երկրագործներն:

Գ. Երկրագործական դրամասուններու հաստատութիւնը. — Այս դրամատուններն խեղճ երկրագործաց օգնելու և զանոնք վաշխառուներու ճիրաններէն ազատելու սկզմամբ հիմնուած են, սակայն գոծնական արդիւնքն ընդհակառակն աւելի վնասակար եղած է: Արդարեւ շատ անգամ իրենց հողերն գրաւ դնելով այդ դրամատուններէն առնուած գումարներն փոխան ըստ օրինի իրենց հողերուն բարելաւութեան գործածելու, կամ երկրագործական կենդանեայ գնման կամ սերմնացու հունա հայթայթելու ծառայեցնելուն՝ դովաւ կը վճարեն վաշխառուներէն առնուած գումարներու անլուր ատկոսներով բարդեալ իրենց պարտքերն, ու ապա չկարողանալով հատուցանել պայմանեալ ժամանակին այդ դրամատուններէն առնուած գումարներն՝ վրաց կուտան իրենց հողերն, . . . և այսպէսով խեղճ երկրագործ դասակարգն աւելի կը վնասուի քան թէ կ'օգտուի այդ հաստատութիւններէն: Այդ դրամատուններէն կ'օգտուին միայն այդ հաստատութիւններու վարիչներն, որք իրենց ամսակամներէն զատ երկրագործներուն փոխառութիւն ընելու համար անոնցմէ շատ անգամ բացառիկ Էօմիսիօններ կ'ընդունին, և Երկր. նախարարութեան պաշտօնեաներն և Երկր. քննիչներն՝ որոնք այդ դրամատուններէն կանոնադրապէս կ'ընդունին իրենց ամսակամները, մինչդեռ կառավարական այլ պաշտօնեաները տարին 5-7 ամսական միայն կը ստանան:

Բաւ չէ իրաց դժբաղդ ու տխուր վիճակն նկարագրել և ցուցադրել՝ հարկ է և ցոյց տալ իրաց դարման տանելու և երկրագործ դասակարգին օգնութեան փութալու միջոցներն, և ահա առ այդ իմ առաջարկներս:

Ա. Մեծ ճամբաներու երկայնքն երկաթուղիներ հաստատել, որպէս՝ Սամսոնէն Տիարպէքիր, և Տրապիզոնէն Տիարպէքիր, անցնելով այդ երկայնքը գտնուող գլխաւոր քաղաքներէն՝ ու ճիւղեր ունենալով կողմնակի գլխաւոր քաղաքներն, ու երկաթուղոյ գօտիններօք կցելով այդ երկու մեծ գիծերն իրարու հետ: Անաստօլաի արեւմտեան եղբերէն մեկնող գիծերն հետզհետէ աւելի յառաջ տանելու աշխատելով՝ և Սուրբոյ մէջ սկսուած երկաթուղոյ ճամբաներն աւելի ճիւղաւորելով՝ երկիրն ծածկուած կ'ըլլայ երկաթեայ ճամբաներու ցանցերով:

Բ. Նաւարկելի դարձնել Եփրատն ու Տիգրիսն իրենց սկերու մօտերէն, ինչպէս էր ժամանակին և այսպէսով Միջագետքը պիտի դառնայ աշխարհի ամենէն հարուստ երկիրը, ինչպէս էր ժամանակին. ուր ծուռնդ առին այնչափ ծաղկեալ քաղաքակրթութիւններ, ուր սնան ու զօրացան այնչափ մեծ ազգեր ու կայսրութիւններ:

Շատ դիւրութեամբ կարելի է և նաւարկելի դարձնել Ալիան, Եէշլի Լըմազն, ձիհանն, որոնք մեծապէս կրնան նպաստել մեր Անատօլուի և Կիլիկիոյ երկրագործութեան ու վաճառականութեան:

Գ. Երկաթուղիի գիծերն և այդ գետերու գնացքներն խճուղիներով (չօտէներով) կցել գիւղաքաղաքներու հետ՝ որպէս զի երկրագործներ դիւրութեամբ կարենան իրենց քրտանց արդիւնք բուսական և կենդանային արտադրութիւններն հասցնել երկաթուղիներն և գետերն:

Դ. Մեր երկրի ճահճուտ մեծ տարածութիւններն՝ ուրդմամբ ու ծառատնակութեամբ չորցնել, և ասով ոչ միայն մշակութեան տարածութիւնները կ'աւելնան՝ այլ և խեղճ ժողովուրդը պաշտպանած կ'ըլլամք ընդդէմ ընդհատական ջերմի, որուն տխրաւիթ սերմերն այդ խոնավ տարածութեանց վրայ կ'ածին և իրենց շուրջ բոլորի ժողովրդեան առողջութեան մեծապէս կը վնասեն:

Ե. Չոր ու աւազուտ տարածութիւններն՝ որոնք ջրի պակասութեան հետեւանօք անբերրի անապատներ կը կազմեն՝ դրացի գետերու միջոցաւ կարելի է ողողել ջրանցքներու հաստատմամբ, և այդպէս Ատանայի ու Միջագետաց ընդարձակ անապատներն կրնան բերրի տարածութեանց վերածուիլ, և ըլլալ աշխարհի երկրագործա-

կան հարուստ շահարաններէն. և արդէն նախնիք այդ մեծ տարածութիւնները կ'ողողէին ջրանցքներով ու իրենց հարստութեան գըլխաւոր աղբիւրներն էին անոնք՝ ինչպէս պատմութիւնն կը ցուցնէ: Այս երկաթուղիներու, շօտէներու հաստատութեան, գետերը նաւարկելի ընելու, ճահիճները չորցնելու, անջրդի անապատներն ողողելու և այլ նմանօրինակ բարւոքիչ ձեռնարկներու գործն օտարաց չյանձնեմք, կամ անոնց չձայնեմք. ո՛չ, ինչ որ տուինք մինչև հիմա՝ բաւ և շատ խոկ է. պէտք է մենք ի գործ դնեմք զանոնք, և եթէ առ այդ պէտք եղած գումարներն չկրնան տալ մեր երկրի դրամատէրներն՝ կրնամք դիմել Եւրոպայի, որ սիրացօժար և աժան տոկոսով պիտի տայ, զի մեր ձեռնարկն արդիւնաբեր է և ապահովեալ: Այո՛, եթէ պատերազմ ընելու կամ պաշտօնէից ամսական վճարելու համար դրամ ուղեմք՝ կրնան երեսնին դարձնել և անտանելի պայմաններ տալարկել, սակայն երբ արդիւնաբեր գործի մը համար է՝ սիրով իրենց քսակներն պիտի բանան, զի ձեռնարկն խոկ կրնայ վըճարել տոկոսն և մայր գումարն: Այսպիսի փոխառութիւն մը և է կերպով չձանրանար Կառաւարութեան վրայ. բաժնեթուղիներով հաստատուած ընկերութիւններ՝ որոց վարիչներն ապահովութիւն կը ներշնչեն՝ դիւրու կը յաջողին և պէտք եղած գումարներն ինքնին կուզան և գործը քիչ ժամանակուան մէջ յառաջ կ'երթայ, և յուսամ թէ 50 տարիէն այսպիսի նպատակի մը համար առնուած գումար մը կրնայ հատուցուիլ: Ահաւասիկ մեր հէզ երկրագործաց ու վաճառականաց նպատակու ամենէն մեծ միջոցները՝ զորս ոչ թէ հարկ՝ այլ պարտք է ի գործ դնել և ընդ փոյթ:

Զ. Պէտք է ազդել Երկր. նախարարութեան պաշտօնէից գործունէութեան վրայ: Հարկ է որ Երկր. բարձր. ժողովը մասնաւոր շրջաբերականներով ճշդէ երկրագործական քննիչներու և տիպար ազարակաց անօրէններու գործունէութիւններն, հսկէ անոնց վրայ, պահանջէ անցնցալէ ընել զիւղերու մէջ չրջաններ, յարաբերութեան մտնել Երկր. դասակարգին հետ, անոնց դասախօսութիւններ ու բանախօսութիւններ ընել, ցուցնել անոնց իրենց արհեստական թերութիւններն և փորձերով գիտական եղանակներն ուսուցանել:

Երկր. վարժարանաց մէջ գործնական դասերու ու մարզանաց

կան հմտութեանց պէտք ունին, զորս այդ պաշտօնին թեկնածուներուն իբր դաս աւանդելու է և սպա հմտութիւննին փորձով հաստատելէ ետք կոչելու է ի պաշտօն:

Այսպէս հմուտ պաշտօնականներ ունենալէ ետք միայն կարելի կ'ըլլայ յարգել զխտակցարար անտառաց մասին եղած օրէնքներն և զանոնք նպաստաւոր կերպով սրբազրել. այդ սրբազրութեան պէտք ունի արդէն այժմու անտառաց շահագործման կանոնագիրը:

* *

Գալով հանքերուն՝ անոնք ալ լքուած էին ասկէ 45 տարի առաջ, անտառաց համար Մ. Թաւրի բերուած ատեն և հանքերու համար բերուեցաւ Մ. Պատալ անուն մամագէտ մը, որ Թուրքիոյ հանքերու մասին ընդհանուր ուսումնասիրութիւն մը և պէտք եղած տեղեկագրերն ու հրահանգներն տալէ ետք՝ 1869ին ասեմներն բացաւ Հանքային վարժարանն՝ Անտառայինին հետ, և որ ասկայն 5 տարուան կեանք մ'ունեցաւ, այսինքն կրկու դաս աշակերտ հասցնելէ ետք փակուեցաւ, ու այժմ հանքաբան հմուտ պաշտօնականներէ զրկուած եմք:

Գիտնալով Հանքաբանական վարժարանի մը ծախուց ստուարութիւնը, չպիտի առաջարկեմ հիմնել՝ գոնէ առ այժմ՝ մի Հանքաբանական վարժարան, այլ գոհանալ Իտալիոյ կառավարութեան ըրածին նման ամէն տարի զրկել Եւրոպայի Հանքաբանական գլխաւոր վարժարանները՝ քաղաքային ճարտարագիտական վարժարանի չրջանաւարտներէն կրկու անձեր, որք անդ իրենց ուսումնասարակելէ ետք՝ մտնեն կառավարութեան ծառայութեան մէջ, և այս եղանակաւ՝ քիչ ծախքով ու քիչ ժամանակէն պիտի ունենամք հմուտ հանքաբաններու երամ մը, և մեր հանքերը պիտի ունենան իրենց կարող վարիչներն ու հսկողներն:

Հանքային տեսակէտով շատ կարեւոր է սրբազրել և հին կանոնագիրը, և այնպիսի տեսակէտով՝ որ նկատի առնուին կրկրին ու կրկրի զուակայ շահերն, և վստահ եմ որ քիչ ժամանակէն հանքերը մեր կրկրի հարստութեան կարեւոր աղբիւրներէն պիտի ըլլան, մասնաւոր երբ հաղորդակցութեան միջոցները բազմանան ու գիւրասան և մեր խեղճ կրկրագործ գասահարգն առանձինն չպիտի մնայ հոգալու մեր Օսմ. Հայրենիքի բոլոր պէտքերն:

* *

Չուզելով այլևս կրկարել արդէն կրկարածիզ այս ճառս, կը կնքեմ առաջարկելով որ Երեսփոխանական Ժողովն իր կրկրագործական Յանձնախումբին միջոցաւ քննէ մեր Օսմ. Հայրենեաց Երկրագործութեան անասուներու և հանքերու վիճակն և անոր ՚ի դարման համեղութեամբ առաջարկած միջոցներս պարզող ներկայ գրութիւնն, ու ինքն տեղեկագրով մը Պատկառելի Ժողովոյդ բերէ այս հրատապ հարցը լուծելու ծրագիրը:

Այս կրկիրն որ կըրենն այնչափ ճոխ ու հարուստ կայսրութիւններ սնուցած է, ինչպէս Քաղքէստտան, Բարսիլոն, Նինուէ, Լիւզիա, Փալեգիա, Հայաստան, և ինչ, և որ Արեւելեան ու Արեւմտեան հզոր կայսրութեանց նախանձու պատան կղած է և ուրոյն քաղաքակրթութեանց ծնունդ տուած է, այժմ իր ծոցն ապրող զաւակներն խեղճ, աղքատ ու անօթի են. հոշն ու կրկիրը նոյն են, անուշով ու ոսկիով լիքն է անոր հողը, հարկ է միայն մեր ոտքերուն տակ գտնուած հարստութիւնները դուրս հանեմք և ժողովրդին սրբամաղբութեան տակ զնեմք. զայդ կը սպասէ ձեզմէ Օսմ. Հայրենիքն որոյ ներկայացուցիչներն էք սատ:



« Ազգային գրադարան



NL0288222

Բացում է բաժանորդագրութիւն

„ԿՈՀԱԿ“

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Բաժնեգինն է՝

Կ. Պոլիս և Գաւառները տարեկան 50, վեցամսեայ 30 դրշ.

Արտասահման տարին 12 ֆրանք, վեց ամիսը 7 ֆր.

(Ռուսաստան և Պարսկաստան տարեկան 5 ռուպլի, Ամերիկա՝ 3 տոլար):

Հասցէն՝ Կ. Պոլիս, Պապ Ալի ճատտէսի,

Սէրեթճի փողոց, թիւ 27

Խմբագրութիւն «Կոհակ»ի

Rédaction du journal «GOHAG»

Avenue de la Sublime Porte, Rue Sépétdji 27, Constantinople.

15728